

Ապիտակ մարմարեայ քարերով ձեւացուցած պարտէզներ , լշեր , զանազան տեսարաններ ու հնարագէտ խաղեր . ներքին որմունքը շինուած է գոյնզգոյն նորահնար աղիւսով մը . ասոնց վրայ աւելցնելու է դաշտային գեղեցիկ տեսարաններն և որմոց վրայ եղած նկարներն , որոնց ճոխութեանը վրայ , ձեր ջէրութիւնը , չկրնար որոշ գաղափար մը առնել :

Խորաքանչիւր մեհեան , չեմ գիտեր ինչպէս բացատրեմ , ամբարանոց մը կրնայ ըսուիլ անգին նիւթերու . այս կուատուններս լի են մետաքսեղէն գործուածքներով՝ որոնց հիւսուածքին բարակութեանն ու ազնուութեանը չափ չկայ . ասոնք բոլորն ալ լարոպա պիտի անցընենք :

Ի՞այց ցաւալին այն է որ բոլոր այս աննկարագրելի շքեղութիւնը երեսի վրայ թողուած է իսել մը ատենէ 'ի վեր , և յայտնի կը տեսնուի որ ներկայ կառավարութիւնն ասոնց վրայ ամենեին հոգ չէ տարած , որով և փոշոյն ու ժամանակին ծախիչ ժանիքներէն մեծապէս վնասուած են :

Կուատան մը մէջ , որ գրեթէ պալատէն մէկ ու կէս փարսախ հեռու է , ու ըիշ շատ փառաւոր կառքերու հետ երկու անգիտացի շքեղ կառքեր ալ կային , զորոնք | որտ Ո' աքարգնի դեսպանն ընծայ տարեր էր կայսեր . ասոնք ալ նմանապէս անինսամ ու երեսի վրայ թողուած էին , և կարծեմ թէ քանի որ ընծայուած են , որ քառասուն տարիէն աւելի է , փոշի մը վրաներնէն վերցուած չէ :

Ո՞ր մէկ բանը նկարագրեմ . եթէ ուղենամ անցողաբար գլխաւոր տեսածներս նշանակել՝ մեծագիր հատոր մը կ'ըլլար . բայց ամենէն աւելի մեծ ցաւս այն է որ լուսանկար¹ գործի մը չունէի հետս որ անով գէթ գլխաւոր տեսարաններն առնելով , վեհափառ կայսեր ներկայացընէի ան ամէն բաները , որ խօսքով ու գրութեամբ բացատրելը անկարելի են : —

1. Գլ. Photographe.

Դասնք են ահաւասիկ նոյն նամակին հետաքրքրական մասունքը՝ որուն մնացած կտղները զանց կ'ընենք , աննշան ու զօրաց այլ և այլ տեղափոխութեանց ցամաք տեղեկութիւներ ըլլալուն պատճառաւ :

Թռէ ի'նչպէս վնասակար բան է տրդայոց հետ գէշ վարուիլը :

Կրկին ախորժով կը հրատարակենք այս յօդուածը , եթէ պատմութեան խրատական մասին համար , և եթէ թարգմանչին տասնամեայ հասակին և ուսումնասէր ջանիցն արդարացի խրախոյս մը աւելցընելու գիտմամբ , որ ծնողաց փոյթն ու ակնկալութիւնը պարապ չհանելով ջանացեր է զիրենք ուրախացընել :

Կան անանկ հայրեր որ իրենց տղոց հետ ան կերպով կը վարուին , որ հոգերնին ալ չէ անոնցմէ ատելի ըլլալ , բաւական է որ տղաք իրենցմէ վախնան . չեն գիտեր որ միայն ընտանութեամբ և մուերմութեամբ հետերնին վարուելով , կրնան իրենք զիրենք սիրելի ընել տալ անոնց ու անոնցմէ հնազանդութիւն պահանջել . և ուր սէր և ընտանութիւն չկայ , հարկաւ անկէ առաջ կու գայ չարարտութիւն , կեղծաւորութիւն , ինք զինքը պարտըկել , ստութիւն , աներեսութիւն և նաև բարուց ապականութիւն : Ո՞վ սիրով կը կենայ ան մարդուն հետ ուսկից որ կը վախնայ : Ո՞յս պատճառաւ աւելի կ'ախորժին տղայք որ և իցէ մարդու հետ կենակցիլ . թէ և մոլի ու ցած մարդ ըլլայ , քան թէ հօրերնուն հետ . ասով ատէպ սրտերնին ու մոքերնին ծառայի մը կը բանան , մինչդեռ հազար բանալիներով գոյ կը պահեն իրենց հօրը ազքին առջեւ : Ո՞յս օրերս հանդիպեցաւ ահաւասիկ ասդէպքս որ հիմա պիտի պատմեմ :

Ժողոցի մը մէջ մարդ մը կը բնակի որ վեց տղոց տէր է , չորսը մանչ՝ երկուքը աղջիկ , որոնց և ոչ անուշ բառ մը

ըսած ունի ազքերնին բացած վայրկենէն մինչեւ աս օրս , որ բաւական մեծցած էն : Ա'հշտ ընքուիները վար կախած , ծուռ աչքով ու կատղած շան մը պէս կը նայի . կը տըռտըռայ կը մըռմըռայ կը յանդիմանէ միշտ , ու ինչ որ ընեն բանի մը չհաւնիր ու գոհ ըլլար : Եշր տեսնէ որ կը խնտան՝ կը բարկանայ , թէ որ լուռ ու տիսուր կենան նոյն պէս կը պոռայ կը կանչէ . վերջապէս ոչ երբէք գոհ կ'ըլլայ : Ի՞անի մը օր առաջ տեսնելով որ միատեղ ժողուած իրարու հետ կը խօսէին , կասկածի գնաց որ իր վրայ գէշ կը խօսին . ուստի խստիւ արգիլեց որ մէյմ' ալ բնաւ չխօսին , և սաստիկ պատիժ սպառնացաւ , թէ որ մէկը համարձակի բերանը բանալու : Խեղչ երիտասարդները դողդղալով համր դարձան , ոչ թէ քանի մը ժամայլ օրեր . վասն զի լրտես ծառայ մը ունէին որ շարունակ չորս կողմերնին կը պլատուտէր , որ իր տիրոջը հաճոյ ըլլալու համար՝ անկէ աւելի գէշ եր : Ա երջապէս լուռ կենալու համբերութիւննին հատնելով , սկսան մէջերնին նշաններով լեզու մը հնարել , և այս կերպով մեղմացնել իրենց ցաւը : Աւ այս բանիս մէջ այնչափ առաջ գնացին , որ իրենց զուարչութիւն մը դարձաւ ասիկայ . կը զարմանային որ աչքի , զլիսի և ձեռաց հազար ու մէկ նշաններ՝ բառերու տեղ իրենց կը ծառայէին . անանկ որ աւելի կը սիրէին աս նշաններով խօսիլ քան թէ բուն լեզուով : Ի՞այց անզգամ ծառան ու զելով հաճոյ գործ մը ընել տիրոջը , իմացուց անոր ամէն բան , ըսելով թէ մէյմէկ կապիկ ու բու դարձեր են , և թէ չարութեամբ հօրերնուն չհնազանդելու աս կերպը գտեր են : Այս բանիս հայրերնին սաստիկ բարկացաւ , անհնազանդութիւն սեպելով այս ըրածնին , որ ըստ ինքեաննեղը մտած կ'ընէին , ու սաստիկ խօսիլ :

պատիժ տալով , ըսաւ որ իրենցմէ հնազանդութիւն կը պահանջէր , և թէ անկէ վերջը չէ թէ միայն չէր ուզէր որ խօսէին՝ հապա ոչ նշան մը ընէին և ոչ ուրիշ բան : Ապշած մնացին խեղչ տղաքը , ինչպէս որ ամէն մարդ կրնայ երեակայել , և քիչ մնաց որ կէս մեռած դիմացը կ'իյնային . սակայն հանդերձ այսու գլխով նշան մը ըրին , կէս մը այն՝ կէս մը ոչ նշանակել ու զելով , տարակուսելով մը թէ արդեօք աս ալ արգիլուած է թէ չէ , ու խոստացան հնազանդիլ : Վիչ մը ետքը կերակուրի ժամանակը համնելով , ամէնքն ալ սեղանի նստան , ու հազիւ թէ դգալը ձեռքերնին առին , առանց բան մը ուտելու արձանի պէս պաղած մնացին . ան ատեն մէջերնէն մէկը մէկանոնց երեսը նայեցաւ . ետքը ացուրները հօրը վրայ տնկելով , չսկսաւ լալ , որուն հետեւցան մէկանոնք ալ չկարենալով ինքնինքնին բռնել : Դառան աս բանիս բերանը բացած ըսաւ . Աղէկ հնազանդութիւն . և կ'ուզէր խօսքը առաջ տանիլ , բայց չեմ գիտեր ինչ յուզմունքէ ամէնքն ալ շարժելով վեր ցատկեցին , ու ինչ ընելնին չգիտնալով յարձակեցան ծառային վրայ , ու մանք զարնելով , ոմանք խածնելով ու պոռալով , անանկ ըրին որ քիչ մնաց կը սպաննէին , թէ որ հայրերնին չազատէր ձեռքերնէն : Այս տեսարանէս հօրերնուն սիրտը շարժելով , վարնտեց ծառան , առաւ գրկեց ու սկագաւ տղաքը , միսիթարեց զիրենք , լացաւ հետերնին , և անկէ ետքը իրեն բնութիւնը փոխեց : Ի՞ոլոր այս եղածը իրեն հրամանովը կը գրեմու կը հրատարակեմ , յուսալով որ ուրիշներուն ալ կրնայ օգտակար ըլլալ :

ԿՈՇԾԻ

Թարգմանեաց
ՍՈՖԻ ՎԻԶԵՆ ՀՕԼԱՍ